

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԿԱՐԻՔՆԵՐԻ «ՀԵՐԱՑԻ» ԹԻՎ 1 ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՊՈԼԻԿԼԻԽԵԿԱՅԻ ԿՈՂՄԻՑ  
ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՑԱՆԿՈՎ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-2021/14-ԵՊԲՀ-1**

ք. Երևան

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նատալի ֆարմ դեղատուն» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Ասատրյանի, որը գործում է «Նատալի ֆարմ դեղատուն» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի պոլիկլինիկայի կողմից քաղաքացիներին անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատնային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 4000000(չորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:<sup>19</sup>

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, սուրբերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա

<sup>19</sup>Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները սովյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ**

<<Երևանի Մխիթար Հերացու անվան  
պետական բժշկական համալսարան>>

Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2

Բանկ՝ «Հայրիզնեբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ

h/h 11500166513800

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

---

(ստորագրությունը)

Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>

<<Նատալի Ֆարմ դեղատուն>> ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Օհանովի փ.15/1

Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

h/h 1570023994240200

ՀՎՀՀ 00154799

Էլ.Փոստ՝ nataliapoteka@mail.ru

Տնօրեն՝ Ա.Ասատրյան

---

(ստորագրությունը)

Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Digitally signed by MURADYAN ARMEN

2007720078

Date: 2020.12.29 13:11:16 AMT

Digitally signed by ARAKELYAN NUNE

5610690161

Date: 2020.12.28 16:43:05 AMT

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳԼՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի Անվանումը և տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Արևտրային անվանումներ	Ընդանուր գին ԱԱՀ ներառյալ
1	2	3	4	5
1	<i>«Հերացի» պոլիկլինիկայի կողմից քաղաքացիներին անվճար դեղորայքի ապահովման պարտադիր ցանկով դեղատեսակի ծառայություն</i>			
1,1	Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 250մգ, տրամադրում	դեղապատիճ	Ազիթրոմիցին դ/պ 250մգ №6	251,63
1,2	Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 500մգ, տրամադրում	դեղապատիճ	Ազիթրոմիցին դ/պ 500մգ №3	1 089
1,3	Ազիթրոմիցին azithromycin դեղահատ թաղանթապատ 500մգ, տրամադրում	դեղահատ	Ազիթրոմիցին դ/հ 500մգ №3	517,11
1,4	Ազիթրոմիցին դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 200մգ/5մլ, 20մլ ապակե տարա, տրամադրում	հատ	Հեմոմիցին դ/կախույթ 200մգ/5մլ 20մլ	2 453,22
1,5	Ազիթրոմիցին azithromycin դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի 100մգ/5մլ, 20մլ, տրամադրում	հատ	Ազիթրոքս 100մգ/5մլ 20մլ սրվ. №1	1 767,15
1,6	Ալբենդազոլ albendazole դեղահատ ծամելու 400մգ, տրամադրում	դեղահատ	Ալբենդազոլ ծամելու դ/հ 400մգ №4	225,47
1,7	Ալյումինիումի հիդրօքսիդ, մագնեզիումի հիդրօքսիդ Aluminium Hydroxide, Magnesium Hydroxide դեղահատ ծամելու 400մգ+400մգ, տրամադրում	դեղահատ	Մապրոքս ծամելու դ/հ №40	50,44
1,8	Ալոպուրինոլ, Allopurinol դեղահատ 100մգ, տրամադրում	դեղահատ	Ալոպուրինոլ դ/հ 100մգ №30	26,43
1,9	Ածուխ ակտիվացված, charcoal activated դեղահատ 250մգ, տրամադրում	դեղահատ	Ածուխ ակտիվացված դ/հ 0,25գ №10	2,67
1,10	Ամիկացին amikacin, լուծույթ ներարկման /կաթիլներարկման, 500մգ/2մլ ամպուլա, 2մլ, տրամադրում	ամպուլա	Ամիկատոն ամպ. 500մգ/2մլ №10	3 019,5
1,11	Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ փաթեթ, 100մլ, տրամադրում	փաթեթ	Ամինոկապրոնաթթու լուծույթ 5% 100մլ	619,74
1,12	Ամինոկապրոնաթթու Aminocaproic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ փաթեթ, 250մլ, տրամադրում	փաթեթ	Ամինոկապրոնաթթու լուծույթ 5% 250մլ	1 105,83
1,13	Ամինոֆիլին, Aminophylline դեղահատ 150մգ, տրամադրում	դեղահատ	Էուֆիլին դ/հ 0,15գ №30	5,48
1,14	Ամինոֆիլին, Aminophylline լուծույթ ներարկման 24մգ/մլ, 5մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Էուֆիլին ամպ. 2,4% 5մլ №10	49,9
1,15	Ամիոդարոն amiodarone դեղահատ բաժանելի 200մգ, տրամադրում	դեղահատ	Արիտմիլ դ/հ 200մգ №20	59,4
1,16	Ամիոդարոն amiodarone լուծույթ ներարկման 50 մգ/մլ, 3մլ, տրամադրում	ամպուլա	Ամիոդարոն ամպ. 5% 3մլ մ/մ №10	328,48
1,17	Ամիտրիպտիլին amitriptyline դեղահատ 25մգ, տրամադրում	դեղահատ	Ամիտրիպտիլին թ/պ դ/հ 25մգ №50	15,48
1,18	Ամլոդիպին amlodipine դեղահատ 5մգ, տրամադրում	դեղահատ	Ամլոդիպին դ/հ 5մգ №30	11,88
1,19	Ամպիցիլին ampicillin դեղափոշի ներարկման լուծույթի 500մգ սրվակ, տրամադրում	սրվակ	Ամպիցիլին ն/ե և մ/մ սրվ. 0,5գ	169,29
1,20	Ամպիցիլին ampicillin դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ սրվակ, տրամադրում	սրվակ	Ամպիցիլին սրվ. ն/ե մ/մ 1գ	243,54
1,21	Ամօքսիցիլին amoxicillin դեղապատիճ/դեղահատ 500մգ, տրամադրում	հատ	Ամօքսիցիլին դ/պ 500մգ №10	45,74
1,22	Ամօքսիցիլին amoxicillin դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 250մգ/5մլ, 100մլ, տրամադրում	հատ	Ամօքսիցիլին օշարակ 250մգ/5մլ 100մլ	1 115,73
1,23	Անաստրոլոլ Anastrosol դեղահատ թաղանթապատ 1 մգ, տրամադրում	դեղահատ	Աքսաստրոլ թ/պ դ/հ 1մգ №28	626,49
1,24	Ատենոլոլ atenolol դեղահատ 100 մգ, տրամադրում	դեղահատ	Ատենոլոլ դ/հ 100մգ №30	7,69
1,25	Ատենոլոլ atenolol դեղահատ 50 մգ, տրամադրում	դեղահատ	Ատենոլոլ դ/հ 50մգ №30	5,02
1,26	Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 10մգ, տրամադրում	դեղահատ	Ատորիս թ/պ դ/հ 10մգ №30	82,04
1,27	Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 20մգ, տրամադրում	դեղահատ	Ատորիս թ/պ դ/հ 20մգ №30	120,71
1,28	Ատորվաստատին atorvastatin դեղահատ թաղանթապատ 40մգ, տրամադրում	դեղահատ	Ատորիս թ/պ դ/հ 40մգ №30	229,68
1,29	Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) լուծույթ ներարկման 1մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Ատրոպինի Սուլֆատ ամպ. մ/մ ն/ե 0,1% 1մլ №10	73,56
1,30	Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) ակնակաթիլ 10մգ/մլ, 5մլ, տրամադրում	հատ	Ատրոպինի Սուլֆատ ակնակաթիլներ 1% 5մլ №1	673,2

1,31	Արծաթի սուլֆադիազին silver sulfadiazine նրբաբույր 10մգ/գ, 40 - 50գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Դերմազին նրբաբույր 1% 50գ	2 590,83
1,32	Ացետազոլամիդ, acetazolamide դեղահատ 250մգ, տրամադրում	դեղահատ	Դիակարբ դ/հ 250մգ №30	113,16
1,33	Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ աղելույժ 100մգ, տրամադրում	դեղահատ	Ասպիրին Կարդիո դ/հ 100մգ №28	48,97
1,34	Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ թաղանթապատ, աղելույժ 100մգ, տրամադրում	դեղահատ	Տրոմբասպին դ/հ 100մգ №20	49,8
1,35	Ացետիլսալիցիլաթթու, acetylsalicylic acid դեղահատ 500մգ, տրամադրում	դեղահատ	Ացետիլսալիցիլաթթու դ/հ 0,5գ №10	8,02
1,36	Ացիկլովիր, acyclovir դեղահատ 200մգ, տրամադրում	դեղահատ	Ացիկլովիր դ/հ 200մգ №20	30,94
1,37	Բենզիլ բենզոատ, Benzyl Benzoate արտաքին կիրառման 250մգ/մլ, 120մլ, տրամադրում	հատ	Բենզիլբենզոատ լոթիոն 25% 120մլ	660,33
1,38	Բենզիլ բենզոատ, Benzyl Benzoate 200մգ/մլ, 100մլ կիթ (Էմուլսիա), տրամադրում	հատ	Բենզիլբենզոատ կիթ 20% 100գ	404,91
1,39	Բենզիլպենիցիլին (բենզիլպենիցիլին նատրիում) benzylpenicillin (benzylpenicillin sodium) դեղափոշի ներարկման լուծույթի 1000000ՄՄ սրվակ, տրամադրում	սրվակ	Բենզիլպենիցիլին սրվ.1գ	128,7
1,40	Բենզոիլ պերօքսիդ, Benzoyl peroxide դոզող արտաքին կիրառման 50մգ/գ, 25գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Վիտամին դոզող 5% 25գ	3 120,48
1,41	Բետամեթազոն betamethasone քսուր 1մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Բետամեթազոն քսուր 0,1% 15գ	1 176,12
1,42	Բետամեթազոն betamethasone քսուր 1մգ/գ, 30գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Ցեկեստոդերմ Վ քսուր 30գ	1 687,95
1,43	Բետամեթազոն betamethasone նրբաբույր 1մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Բետամեթազոն նրբաբույր 0,1% 15գ	1 176,12
1,44	Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ թաղանթապատ 2,5մգ, տրամադրում	դեղահատ	Բիպրոլ դ/հ 2,5մգ №30	39,6
1,45	Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ թաղանթապատ 5մգ, տրամադրում	դեղահատ	Բիպրոլ դ/հ 5մգ №30	31,25
1,46	Բիսոպրոլոլ bisoprolol դեղահատ թաղանթապատ 10մգ, տրամադրում	դեղահատ	Բիպրոլ դ/հ 10մգ №30	66,13
1,47	Բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride), լուծույթ ներարկման 5մգ/մլ, 4մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Բուպիվակային Սպինալ ամպ. 0,5% 5մգ/մլ 4մլ №5	1 940,99
1,48	Բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride), լուծույթ ներարկման 5մգ/մլ, 10մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Բուպիվակայինի հիդրոքլորիդ ամպ. 0,5% 5մգ/մլ 10մլ №10	1 336,3
1,49	Գենտամիցին gentamicin լուծույթ ներարկման 40մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Գենտամիցին-Կ ամպ. 40մգ/մլ №10	191,07
1,50	Գենտամիցին gentamicin լուծույթ ներարկման 40մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Գենտամիցին-Կ ամպ. 80մգ/2մլ №10	207,9
1,51	Գլիբենկլամիդ, glibenclamide դեղահատ 5 մգ, տրամադրում	դեղահատ	Գլիբենկլամիդ դ/հ 5մգ №50	10,49
1,52	Նիտրոգլիցերին (nitroglycerine) դեղահատ ենթաէվզվային 0,5 մգ, տրամադրում	դեղահատ	Նիտրոգլիցերին դ/հ 0,5մգ №40	10,1
1,53	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 50մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 5% 100մլ	364,32
1,54	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 50մգ/մլ, 250մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 5% 250մլ	383,13
1,55	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 50մգ/մլ, 500մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 5% 500մլ	388,08
1,56	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 50մգ/մլ, 1000մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 5% 1 000մլ	597,96
1,57	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 50մգ/մլ, 3000մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 5% 3000մլ	1 367,19
1,58	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 100մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 10% 100մլ	554,4
1,59	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 100մգ/մլ, 200մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 10% 200մլ	601,92
1,60	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլներարկման, 100մգ/մլ, 500մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Գլյուկոզա 10% 500մլ	701,91
1,61	Դոքսիցիլին doxycycline դեղահատ թաղանթապատ 100մգ, տրամադրում	դեղահատ	Դոքսիցիլինի Հիդրոքլորիդ 0,1գ դ/պ №10	22,87
1,62	Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ, 5մլ սրվակ, տրամադրում	սրվակ	Դեքսամեթազոն ակնակաթիլներ 0,1% 5մլ	898,92
1,63	Դեքսամեթազոն dexamethasone ակնակաթիլներ 1մգ/մլ, 10մլ սրվակ, տրամադրում	սրվակ	Դեքսամեթազոն ակնակաթիլներ 0,1% 10մլ	702,9
1,64	Դեքսամեթազոն dexamethasone լուծույթ ներարկման 4մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Դեքսամեթազոն ամպ. 4մգ/մլ 1մլ №5	123,55
1,65	Դիազեպամ, diazepam դեղահատ 5մգ, տրամադրում	դեղահատ	Դիազեպամ դ/հ 5մգ №24	10,6
1,66	Դիազեպամ diazepam դեղահատ 10մգ, տրամադրում	դեղահատ	Դիազեպամ դ/հ 10մգ №24	13,2
1,67	Դիազեպամ diazepam լուծույթ ներարկման 5մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Սիբազոն (Դիազեպամ) ամպ. 0,5% 2մլ №10	126,13
1,68	Դիգոքսին digoxin դեղահատ 0,25մգ, տրամադրում	դեղահատ	Դիգոքսին դ/հ 250մկգ №50	7,27
1,69	Դիդրոգեստերոն Dydrogesterone դեղահատ թաղանթապատ 10 մգ, տրամադրում	դեղահատ	Դյուֆաստոն թ/պ դ/հ 10մգ №20	297,15

1,70	Դիկլոֆենակ diclofenac դոնորդ արտաքին կիրառման 10մգ/գ, 50գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Դիկլոֆենակ Նատրիում դոնորդ 1% 50գ	514,8
1,71	Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 100մգ, տրամադրում	դեղահատ	Դիկլոֆենակ Ռետարդ թ/պ դ/հ 100մգ №20	35,59
1,72	Դիկլոֆենակ diclofenac դեղահատ 75մգ, տրամադրում	դեղահատ	Դիկլակ ԻՊ դ/հ 75մգ №20	90,09
1,73	Դիկլոֆենակ diclofenac դեղահատ թաղանթապատ կամ դեղապատիճ 50մգ, տրամադրում	դեղահատ	Դիկլոֆենակ թ/պ դ/հ 50մգ №20	21,19
1,74	Դիկլոֆենակ diclofenac դեղահատ թաղանթապատ 25մգ, տրամադրում	դեղահատ	Օրտոֆեն թ/պ դ/հ 25մգ №30	10,16
1,75	Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Դիկլոֆենակ ամպ. 25մգ/մլ 3մլ №5	117,61
1,76	Դիֆենհիդրամին diphenhydramine դեղահատ 50մգ, տրամադրում	դեղահատ	Դիմեդրոլ դ/հ 0,05գ №10	5,94
1,77	Դիֆենհիդրամին diphenhydramine լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Դիմեդրոլ ամպ. 1% 1մլ №10	29,11
1,78	Դրոտավերին drotaverine դեղահատ 40մգ, տրամադրում	դեղահատ	Դրոտավերինի հիդրոքլորիդ դ/հ 40մգ №20	11,83
1,79	Դրոտավերին drotaverine լուծույթ ներարկման 20մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Դրոտավերին ամպ. 20մգ/մլ 2մլ №10	70,19
1,80	Էթինիլեստրադիոլ + լևոնորգեստրել Ethinylestradiol + Levonorgestrel դեղահատ թաղանթապատ 30մկգ+150մկգ, տրամադրում	դեղահատ	Ռիզնիդոն թ/պ դ/հ №3 x 21	120,2
1,81	Էնալապրիլ enalapril դեղահատ 2.5 մգ, տրամադրում	դեղահատ	Էնապ դ/հ 2,5մգ №20	34,16
1,82	Էնալապրիլ enalapril դեղահատ 5 մգ, տրամադրում	դեղահատ	Էնալապրիլ դ/հ 5մգ №20	6,04
1,83	Թիամազոլ, Thiamazole դեղահատ 5մգ, տրամադրում	դեղահատ	Սերկազոլիլ դ/հ 5մգ №100	14,01
1,84	Թիամին thiamine լուծույթ ներարկման 50մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Թիամին ամպ. 5% 1մլ №10	24,95
1,85	Թիմոլոլ timolol ակնակաթիլներ 5մգ/մլ, 5մլ սրվակ, տրամադրում	սրվակ	Թիմոլոլ ակնակաթիլներ 0,5%5մլ	544,5
1,86	Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium), դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի 0.5գ սրվակ, տրամադրում	սրվակ	Թիոպենտալ նատրիում սրվ. 0,5գ	2 514,6
1,87	Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium), դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի 1գ սրվակ, տրամադրում	սրվակ	Թիոպենտալ նատրիում սրվ. 1գ	3 040,29
1,88	Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ թաղանթապատ 200մգ, տրամադրում	դեղահատ	Իբուպրոֆեն դ/հ 0,2գ №50	7,86
1,89	Իբուպրոֆեն ibuprofen դեղահատ թաղանթապատ 400մգ, տրամադրում	դեղահատ	Իբուպրոֆեն թ/պ դ/հ 0,4գ №30	27,92
1,90	Իբուպրոֆեն ibuprofen լուծույթ ներքին ընդունման, 40մգ/մլ 100մլ օշարակ, տրամադրում	հատ	Միգ մանկական օշարակ 200մգ/5մլ 100մլ №1	3 363,03
1,91	Իզոֆլուրան isoflurane լուծույթ շնչառման 100մլ շշիկ, տրամադրում	շշիկ	Անեսթերան 99,9% 100մլ	17 384,4
1,92	Իմիպենեմ, ցիլաստատին imipenem, cilastatin դեղափոշի կաթիլներարկման լուծույթի 500մգ+500մգ սրվակ, տրամադրում	սրվակ	Ցիլապենեմ դ/փոշի ն/ե ներարկ. սրվ. 500մգ/500մգ №1	4 950
1,93	Յոհեքսոլ iohexol լուծույթ ներարկման, 755մգ/մլ (350մգ յոդ/մլ), 50մլ շշիկ, տրամադրում	շշիկ	Օմնիպակ-350 սրվ. 50մլ №1	10 999,89
1,94	Յոհեքսոլ iohexol լուծույթ ներարկման, 755մգ/մլ (350մգ յոդ/մլ), 100մլ շշիկ, տրամադրում	շշիկ	Օմնիպակ-350 սրվ. 100մլ №1	17 995,23
1,95	Լակտուլոզ lactulose լուծույթ ներքին ընդունման, 670մգ/մլ, 100մլ, տրամադրում	հատ	Լաքսալակ օշարակ 100մլ	1 880,01
1,96	Լակտուլոզ lactulose լուծույթ ներքին ընդունման, 670մգ/մլ, 200մլ, տրամադրում	հատ	Լաքսալակ օշարակ 200մլ	2 555,19
1,97	Լակտուլոզ lactulose օշարակ 667մգ/մլ, 500մլ, տրամադրում	հատ	Դյուֆալակ օշարակ 500մլ	5 538,06
1,98	Լակտուլոզ lactulose օշարակ 667մգ/մլ, 1000մլ, տրամադրում	հատ	Դյուֆալակ օշարակ 1 000մլ	10 645,47
1,99	Լեամիզոլ levamisole դեղահատ 50մգ, տրամադրում	դեղահատ	Դեկարիս դ/հ 50մգ №2	418,28
1,100	Լեամիզոլ levamisole դեղահատ 150մգ, տրամադրում	դեղահատ	Դեկարիս դ/հ 150մգ №1	867,24
1,101	Լեոդոպա, լևոդոպա carbidopa, levodopa, դեղահատ, 25մգ+250մգ., տրամադրում	դեղահատ	Լևոկոմ դ/հ 250մգ+25մգ №10	121,37
1,102	Լեոթիրոքսին levothyroxine դեղահատ 50մկգ, տրամադրում	դեղահատ	Էութիրոքս դ/հ 50մկգ №100	14,39
1,103	Լեոթիրոքսին դեղահատ levothyroxine 100մկգ, տրամադրում	դեղահատ	Էութիրոքս դ/հ 100մկգ №100	16,26
1,104	Լեոֆլոքսացին Levofloxacin դեղահատ թաղանթապատ 500մգ, տրամադրում	դեղահատ	Վալմոկս դ/հ 500մգ №10	460,45
1,105	Լեոֆլոքսացին Levofloxacin լուծույթ կաթիլներարկման 5մգ/մլ, 100մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Լեոֆլոկսացին լուծույթ 0,5% 100մլ	4 276,8
1,106	Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 20մգ/մլ, 2մլ, տրամադրում	ամպուլա	Լիդոկային հիդրոքլորիդ ամպ. 2% 2մլ №10	33,26
1,107	Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 100մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Լիդոկայինի հիդրոքլորիդ ամպ. 10% 2մլ №10	107,71
1,108	Լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride) լուծույթ ներարկման 10մգ/մլ, 20մլ սրվակ, տրամադրում	սրվակ	Լիդոկային լուծույթ 1% 20մլ №10	829,72
1,109	Լորազեպամ, Lorazepam դեղահատ 1մգ, տրամադրում	դեղահատ	Լորազեպամ դ/հ 1մգ №24	17

1,110	Լորատադին, Loratadine դեղահատ 10մգ, տրամադրում	դեղահատ	Լորատադին դ/հ 10մգ №10	34,65
1,111	Գալիումի քլորիդ, Potassium chloride լուծույթ կաթիլաներարկման 40մգ/մլ փաթեթ, 100մլ, տրամադրում	փաթեթ	Գալիումի քլորիդ լուծույթ 4% 100մլ	522,72
1,112	Գալիումի քլորիդ, Potassium chloride լուծույթ կաթիլաներարկման 40մգ/մլ փաթեթ, 200մլ, տրամադրում	փաթեթ	Գալիումի քլորիդ լուծույթ 4% 200մլ	693
1,113	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ ամպուլա, 5մլ, տրամադրում	ամպուլա	Կալցիումի գլյուկոնատ ամպ. 10% 5մլ №10	101,97
1,114	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ ամպուլա, 10մլ, տրամադրում	ամպուլա	Կալցիումի գլյուկոնատ ամպ. 10% 10մլ №10	187,11
1,115	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate դեղահատ 500մգ., տրամադրում	դեղահատ	Կալցիումի գլյուկոնատ դ/հ 0,5գ №10	11,19
1,116	Կանամիցին kanamycin դեղափոշի մ/մ ներարկման լուծույթի, 1000մգ սրվակ, տրամադրում	սրվակ	Կանամիցին սրվ. 1գ	263,34
1,117	Կարբամազեպին, carbamazepine դեղահատ 200մգ., տրամադրում	դեղահատ	Կարբամազեպին դ/հ 200մգ №20	50,69
1,118	Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 6,25մգ., տրամադրում	դեղահատ	Կարվեդիլոլ դ/հ 6,25մգ №28	113,46
1,119	Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 12,5մգ., տրամադրում	դեղահատ	Կարվեդիլոլ դ/հ 12,5մգ №28	176,36
1,120	Կարվեդիլոլ, carvedilol դեղահատ 25մգ., տրամադրում	դեղահատ	Կարվեդիլոլ դ/հ 25մգ №28	244,18
1,121	Կետամին ketamine լուծույթ ներարկման, 500մգ/10մլ, 10մլ սրվակ, տրամադրում	սրվակ	Կալիպսոլ ամպ. 500մգ 10մլ №5	2 124,74
1,122	Կլարիթրոմիցին, clarithromycin դեղահատ թաղանթապատ 500 մգ, տրամադրում	դեղահատ	Կլարիտրոմիցին դ/հ 500մգ №14	413,75
1,123	Կլոմիֆեն clomifene դեղահատ 50մգ, տրամադրում	դեղահատ	Կլոստիլբեգիտ դ/հ 50մգ №10	732,2
1,124	Կլոպիդոգրել, clopidogrel դեղահատ թաղանթապատ 75մգ, տրամադրում	դեղահատ	Զիլտ թ/պ դ/հ 75մգ №14	286,39
1,125	Կլոտրիմազոլ, clotrimazole նրբաքսուր հեշտոցային 10մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Կլոտրիմազոլ նրբաքսուր 1% 15գ	260,37
1,126	Կլոտրիմազոլ, clotrimazole դեղահատ հեշտոցային 100մգ, տրամադրում	դեղահատ	Կլոտրիմազոլ հեշտոց. մոմիկ 100մգ №6	127,88
1,127	Հալոպերիդոլ haloperidol, լուծույթ ներարկման, 5մգ/մլ, 1մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Հալոպերիլ ամպ. 0,5% 1մլ №10	138,6
1,128	Հալոպերիդոլ haloperidol, դեղահատ, 5մգ, տրամադրում	դեղահատ	Հալոպերիդոլ դ/հ 5մգ №48	16,15
1,129	Հեպարին (հեպարին նատրիում) heparin (heparin sodium), լուծույթ ներարկման, 5000ՄՄ/մլ, 5մլ սրվակ, տրամադրում	սրվակ	Հեպարին սրվ. 5 000ՄՄ/մլ 5մլ №1	1 871,1
1,130	Հիդրոկորտիզոն hydrocortisone, քսուր 10մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Հիդրոկորտիզոն քսուր 1% 15գ	309,87
1,131	Հիդրոքլորոթիազիդ hydrochlorothiazide, դեղահատ, 25մգ, տրամադրում	դեղահատ	Հիդրոքլորոթիազիդ դ/հ 25մգ №20	15,39
1,132	Մանիտոլ mannitol, լուծույթ կաթիլաներարկման, 100մգ/մլ, 400մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Մանի-Տեկ լուծույթ 10% 400մլ	1 018,71
1,133	Մանիտոլ mannitol, լուծույթ կաթիլաներարկման, 100մգ/մլ, 500մլ փաթեթ, տրամադրում	փաթեթ	Մանիտոլ լուծույթ 10% 500մլ	1 062,27
1,134	Մեբենդազոլ, mebendazole դեղահատ 100մգ, տրամադրում	դեղահատ	Մեբենդազոլ դ/հ 100մգ №10	53,46
1,135	Մեբենդազոլ, mebendazole դեղահատ 500մգ, տրամադրում	դեղահատ	Մեբենդազոլ դ/հ 500մգ №1	524,7
1,136	Մեթիլդոպա methyl dopa դեղահատ 250մգ, տրամադրում	դեղահատ	Դոպեկիտ դ/հ 250մգ №50	55,26
1,137	Մետոկլոպրամիդ metoclopramide լուծույթ ներարկման 5մգ/մլ, 2մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Մետոկլոպրամիդ ամպ. 5մգ/մլ 2մլ №10	66,63
1,138	Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 25մգ, տրամադրում	դեղահատ	Էգիլոլ դ/հ 25մգ №60	22,94
1,139	Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 50մգ, տրամադրում	դեղահատ	Էգիլոլ դ/հ 50մգ №60	30,2
1,140	Մետոպրոլոլ metoprolol դեղահատ 100մգ, տրամադրում	դեղահատ	Էգիլոլ դ/հ 100մգ №60	40,26
1,141	Մետրոնիդազոլ, metronidazole դեղահատ 250մգ, տրամադրում	դեղահատ	Մետրոնիդազոլ դ/հ 250մգ №10	6,24
1,142	Մետրոնիդազոլ, metronidazole դեղահատ 500մգ, տրամադրում	դեղահատ	Մետրոնիդազոլ-Աստելիա դ/հ 500մգ №30	61,38
1,143	Մետրոնիդազոլ metronidazole, մոմիկներ հեշտոցային, 500մգ, տրամադրում	մոմիկ	Ֆլագոն հեշտոց. մոմիկ 500մգ №10	98,51
1,144	Մետրոնիդազոլ, metronidazole դեղակախույթ ներքին ընդունման 25մգ/մլ, 100մլ շշիկ, տրամադրում	շշիկ	Ֆլագոն օշարակ 125մգ/5մլ 100մլ	1 917,63
1,145	Մետֆորմին metformin դեղահատ թաղանթապատ 500մգ, տրամադրում	դեղահատ	Գլյուկոֆաճ դ/հ 500մգ №60	37,08
1,146	Մերոպենեմ, Meropenem դեղափոշի ն/ն ներարկման/կաթիլաներարկման լուծույթի 500մգ սրվակ, տրամադրում	սրվակ	Տոնոպենեմ սրվ. 500մգ ն/ն №1	8 043,75
1,147	Միդազոլամ midazolam լուծույթ ներարկման 5մգ/մլ, 3մլ ամպուլա, տրամադրում	ամպուլա	Միդազոլամ Կալցեկս ամպ. 5մգ/մլ 3մլ №10	1 138,5
1,148	Միզոպրոստոլ misoprostol դեղահատ 200մկգ, տրամադրում	դեղահատ	Միբրոլուտ դ/հ 200մկգ №4	843,23
1,149	Միկոնազոլ miconazole, նրբաքսուր արտաքին կիրառման 20մգ/գ, 15գ պարկուճ, տրամադրում	պարկուճ	Միկոնազոլ նրբաքսուր 2% 15գ	416,79
1,150	Միֆեպրիստոն mifepristone, դեղահատ, 200մգ, տրամադրում	դեղահատ	Միբրոպրիստոն դ/հ 200մգ №3	8 432,49
